ՀՀ դրամ գումարը վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց, եռօրյա ժամկետում:

Հայցվորի ներկայացուցիչը կազմվել և ստորագրվել է հայցադիմում, որին կցվել են հայցվորի տիրապետության ներքո գտնվող ապացույցները, ներկայացրել է դիրքորոշում, այլ անձանցից ապացույցներ ձեռք չեն բերվել, փաստաբանը չի մասնակցել դատական նիստին, գործի բարդությունը, գործի շուրջ փաստաբանի կողմից մատուցված ծառայությունները, ելնելով վեճի էությունից և դրա առանձնահատկությունից, Դատարանը գտնում է, որ սույն գործով փաստաբանի վարձատրության ողջամիտ գումարը 100,000 ՀՀ դրամ է: Հետևաբար հայցվորի՝ 300,000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի ողջամիտ վարձատրության գումար, բռնագանձելու պահանջը ենթակա է բավարարման մասնակի՝ 100,000 ՀՀ դրամի չափով:

Միաժամանակ նկատի ունենալով, որ պետական տուրքից և փաստաբանի վարձատրությունից զատ այլ դատական ծախսեր չկան, Դատարանը դատական ծախսերի հարցը համարում է լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-րդ, 192-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«Աննարկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցը բավարարել մասնակի:

Անվավեր ճանաչել ««Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/11 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության՝ «Աննարկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը մերժելու որոշումը:

««Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունից հօգուստ «Աննարկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բռնագանձել 200,000 ՀՀ դրամ, որից 100,000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար, 100,000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի վարձատրության գումար:

«Աննարկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ ««Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության՝ 200,000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի վարձատրության գումար բռնագանձելու պահանջ մասով, մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Վճիռը կամովին չկատարվելու դեպքում այն կկատարվի պարտապանի հաշվին դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով:

ԴԱՏԱՎՈՐ Ս.ՈՒԼԻԽԱՆՅԱՆ

Վճիռը «___» «_____» 2024 թվականին մտել է օրինական ուժի մեջ:

ԴԱՏԱՎՈՐ Ս. ՈՒԼԻԽԱՆՅԱՆ